

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N N «ՀՀ ԷԵԲՊՆ-2017-ՇՀԾՁԲ-15/3-1»**

ք. Երևան

<<28>> մարտի 2017թ.

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Կ. Ղահրամանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կարկոմավոր սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Հովսեփյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 1699900 (մեկ միլիոն վեց հարյուր իննսունինը հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 քանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով¹:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱԿԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

¹ Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված փնելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում²:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները³:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

² Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

³ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համարող գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:


7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

«Էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների
նախարարություն
ք. Երևան, Հանրապ. Հրապարակ
Կառավարական տուն 3
Հ/Հ 900011009074, 900011009082
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործ. վարչություն
ՀՎՀՀ 02508219

Ստորագրողի ղեկավար՝



Կ. Ղահրամանյան

Կատարող

«Կարկումավտո սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Ն. Տիգրանյան 1, փակուղի 1
Հ/Հ 217002121630001
ՀՎՀՀ 00131374
«Էյ» Էս-Բի-Սի բանկ Հայաստան»



Handwritten signatures at the bottom left of the page.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

NN	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ շափաբաժինների ²		
		Չափաբաժին 1	Չափաբաժին 3	Չափաբաժին 4
		5 տեղանոց մարդատար հետևի տանող Գազ 31/	Նիսան Իքս Թրայվ, Նիսան Պատֆայնդեր	Հունդայի Էլանտրա, Տոյոտա Կամրի
		ԱՊՀ անդամ երկրների արտադրության	Արտասահմանյան երկրների արտադրության	
1	2	3	5	6
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում			
1	Բռնկման համակարգի ստուգում	3000	3000	3000
2	Սառեցման համակարգի ստուգում	0	0	0
3	Յուղման համակարգի ստուգում	0	0	0
4	Արտացման համակարգի ստուգում	0	0	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0	0	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0	0
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0	0	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0	0	0
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0	0	0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	3000	3000	3000
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0
13	ABS համակարգի ստուգում	0	0	0
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0
16	Թափքի վիճակի ստուգում	0	0	0
17	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0	0	0
	SU-2 ներառվող ծառայությունների անվանում			
18	Շարժիչի հանում և տեղադրում	15000	50000	50000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	0	10	10
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	10	10
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	10	10
22	Շարժիչի վերանորոգում	35000	60000	60000
23	Նույնը DOHC դեպքում	0	10	10
24	Նույնը V6-ի դեպքում	0	10	10
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	2000	5000	5000
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	2000	3000	3000

27	Նույնը աջի համար (V6)	0	10	10
28	Նույնը ձախի համար (V6)	0	10	10
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	8000	15000	15000
30	Նույնը աջի համար (V6)	0	10	10
31	Նույնը ձախի համար (V6)	0	10	10
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	10	10	10
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	6000	6000	6000
34	Փակածի խցուկի փոխարինում	3000	4000	4000
35	Նույնը V6-ի դեպքում	0	10	10
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	2000	2000	2000
37	Նույնը V6-ի ձախի դեպքում	0	10	10
38	Նույնը V6-ի աջի դեպքում	0	10	10
39	Նույնը DOHC դեպքում	0	10	10
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	0	2000	2000
41	Հրիչների փոխարինում SOHC	1000	2000	2000
42	Նույնը DOHC դեպքում	0	10	10
43	Ատամնավոր փոկի փոխարինում	0	0	10000
44	Նույնը DOHC դեպքում	0	0	10
45	Նույնը V6-ի դեպքում	0	0	10
46	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	1000	2000	2000
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	10	10
48	Նույնը DOHC դեպքում	0	10	10
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	10	10
50	Նույնը V6-ի դեպքում	0	10	10
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	10	10
52	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	1000	1000	1000
53	Նույնը UFS-ի դեպքում	0	10	10
54	Մխոցային օդակների փոխարինում	4000	4000	4000
55	Նույնը DOHC դեպքում	0	10	10
56	Նույնը V6-ի դեպքում	0	10	10
57	Թափանիսի հանում և տեղադրում	1000	2000	2000
	2. Ղեկավարման, սեման և յուղման համակարգ			
58	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2000	3000	3000
59	Յուղի պոմպի փոխարինում	3000	3000	3000
60	Նույնը DOHC դեպքում	0	10	10
61	Նույնը V6-ի դեպքում	0	10	10
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	3000	5000	5000
63	Բռնկման կարգավորում	100	100	100
64	CO կարգավորում	100	100	100
65	խարնարակի հանում և տեղադրում	0	0	0
66	խարնարակի վերանորոգում	0	0	0
67	Օդի զտիչի փոխարինում	2000	2000	2000
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	9000	9000	9000
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	9000	9000	9000
70	Բենզամղիչի փոխարինում	2000	10000	10000
71	Վառելիքի զտիչի փոխարինում	1500	2000	2000
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	2000	2000	2000
73	Տրամյուրի հանում և տեղադրում	0	0	0
74	Տրամյուրի վերանորոգում	0	0	0
75	Յուղ շարժիչի, հանքային 1լ համար	0	0	0
76	Յուղ շարժիչի, սինթետիկ 1լ համար	0	0	0
77	Յուղ շարժիչի, կիսասինթետիկ 1լ համար	0	0	0
	3. Սառեցման և արտաձման համակարգ			

75	Հովհարի փոկի հանում և տեղադրում	1500	5000	5000
76	Հովհարի հանում և տեղադրում	3000	5000	5000
77	Ռադիատորի հանում և տեղադրում	5000	8000	8000
78	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	10	10
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	10	10
80	Ռադիատորի վերանորոգում	3000	3000	3000
81	Թերմոստատի փոխարինում	3000	6000	6000
82	Ջրի պոմպի փոխարինում	4000	8000	8000
83	Նույնը DOHC և V-6 դեպքում	0	10	10
84	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	10	10
85	Ջրի պոմպի վերանորոգում	100	100	100
86	Նույնը DOHC դեպքում	0	10	10
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	10	10
88	Ընդարձակող բաքի փոխարինում	1000	2000	2000
89	Խլարարի հանում և տեղադրում	3000	5000	5000
90	Նույնը DOHC դեպքում	0	10	10
91	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	1000	2000	2000
92	Հակասատիչ հեղուկ, խտությունը 40%, 1լ համար	0	0	0
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ			
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	2000	5000	0
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	1000	1000	0
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	1000	1000	0
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	500	500	0
96	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	0	500	0
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	12000	40000	0
98	ՓՏ-ի վերանորոգում	10000	50000	0
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	100	100	0
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	100	100	0
101	Վազբաչակի շարժաբերի փոխարինում	0	100	0
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	0	1000	1000
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	0	1000	1000
104	Նույնը V6-ի համար	0	10	10
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	0	40000	40000
106	Նույնը V6-ի համար	0	10	10
107	ԱՓՏ-ի վերանորոգում	0	50000	50000
108	Նույնը V6-ի համար	0	10	10
109	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	0	12000	12000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ			
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	0	1000	0
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	0	25000	0
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	0	3000	0
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	2000	7000	0
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով	100	100	0
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	2000	4000	0
116	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	2000	4000	0
	6. Առջևի և հետևի կամրջակներ			
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	10000	15000	0
118	Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում	10000	15000	0

119	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	100	100	0
120	Առջևի կամ հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում	2000	8000	0
121	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	1000	5000	0
7. Կախոց				
122	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	100	100	100
123	Տրավերտի հանում և տեղադրում	5000	25000	25000
124	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	0	7000	7000
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	3000	7000	7000
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0	0	0
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	0	5000	5000
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0	0	0
129	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	0	100	100
130	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	0	100	100
131	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	0	1000	1000
132	Չսպանակի հանում և տեղադրում	1000	4000	4000
133	Չսպակի հանում և տեղադրում	3000	0	0
134	Չսպակի վռանների փոխարինում	1600	0	0
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1500	5000	5000
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում	4000	6000	6000
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում	100	2000	2000
138	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	2000	4000	4000
139	Միջին ձգանի հանում և տեղադրում	2000	2000	2000
140	Ճոճանակալին լծակի հանում և տեղադրում	1000	1000	1000
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	3000	3000	3000
142	Վերևի լծակի վռանների փոխարինում	100	1000	1000
143	Գնդե հողակապերի փոխարինում	1500	3000	3000
144	Ծայրակների հանում և տեղադրում	1000	3000	3000
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	2000	2000	2000
146	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	500	3000	3000
147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	10	10	10
148	Հետևի զսպանակի փոխարինում	0	1000	1000
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1500	5000	5000
150	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	10	10	10
151	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	10	1000	1000
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	1000	3000	3000
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	0	0	2000
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	0	0	3000
155	Անվաքացքի կարագավորում	6000	12000	12000
156	Զողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	500	500	500
8. Ղեկային մեխանիզմ				
157	Ղեկային կայունի հանում և տեղադրում	8000	15000	15000
158	Նույնը V6-ի համար	0	10	10
159	Ղեկային կայունի վերանորոգում	8000	50000	50000
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	100	100	100

161	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	100	100	100
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	2000	3000	3000
163	Նույնը DOHC դեպքում	0	10	10
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	10	100	100
165	Նույնը DOHC դեպքում	10	10	10
166	Հիդրոուժեղարարի փողոսի հանում և տեղադրում	2000	4000	4000
167	Նույնը DOHC դեպքում	0	10	10
168	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	10	10
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	10	100	100
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	10	100	100
9. Արգելակային համակարգ				
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում	3000	4000	4000
172	Գլխ. գլանի վերանորոգում	1000	1000	1000
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	5000	8000	8000
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում	2000	2000	2000
175	Բանվ. գլանի վերանորոգում	1000	500	500
176	Արգելակային համակարգի օդահանում	1500	4000	4000
177	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	2000	4000	4000
178	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	0	3000	3000
179	Առջևի սուպպորտի վերանորոգում	500	500	500
180	Հետևի սուպպորտի վերանորոգում	0	500	500
181	Արգելակային փողոսի փոխարինում	2000	3000	3000
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	2000	4000	4000
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	0	5000	5000
184	Հետևի կոճղակների փոխարինում	4000	0	0
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	2000	4000	4000
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	10	4000	4000
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	1000	1000	1000
188	ABS-ի հանում և տեղադրում	0	1000	1000
189	ABS-ի վերանորոգում	0	100	100
190	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	3000	3000	3000
191	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	500	500	500
10. Էլեկտրասարքավորում				
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում	1000	1000	100
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	3000	2000	100
194	Գեներատորի հանում և տեղադրում	3000	5000	100
195	Նույնը V6-ի դեպքում	10	10	100
196	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	10	10	100
197	Գեներատորի վերանորոգում	5000	10000	100
198	Մեկնարկիչի հանում և տեղադրում	3000	5000	100
199	Մեկնարկիչի վերանորոգում	5000	10000	100
200	Առջևի լապտերի հանում և տեղադրում	1000	1000	100
201	Հետևի լապտերի հանում և տեղադրում	1000	1000	100
202	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	5000	5000	100
203	Վազբաչափի հանում և տեղադրում	10	1000	100
204	Վազբաչափի ճոպանի հանում և տեղադրում	10	100	100

205	Սաքերի պանելի հանում և տեղադրում	1000	5000	100
206	Արագաչափի հանում և տեղադրում	10	500	100
207	Ազդանշանի հանում և տեղադրում	1000	1000	100
208	Ապակեվկացիչի շարժիչի հանում և տեղադրում	3000	5000	100
209	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	3000	5000	100
210	Ազդանշալային համակարգի տեղադրում	5000	8000	100
211	Մագնիստոլայի տեղադրում	1000	3000	100
212	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	1000	1000	100
213	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	5000	5000	100
214	Էլ/հաղորդալարերի հիմնական խտրցի հանում և տեղադրում	1000	1000	100
215	Էլ/հաղորդալարերի երկրորդային խտրցի հանում և տեղադրում	5000	5000	100
216	Էլեկտրական տվիչների փոխարինում	2000	3000	100
217	Էլեկտրական անջատիչների փոխարինում	1000	2000	100
218	Վառոցքի մոմերի փոխարինում	1500	5000	100
219	Կոնդիցիոների լիցքավորում	0	12000	100
220	Կոնդիցիոների վերանորոգում	0	100	100
	11. Այլ ծառայություններ			
221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում	3000	3000	3000
222	Ավտոմեքենայի վազում	2500	3000	3000
223	Անիվի հանում և տեղադրում	500	500	500
224	Անվաղողի վերանորոգում	1000	1000	1000
225	Անիվի բայանսավորում	1000	1000	1000
226	Անիվի վազ	100	100	100
227	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	1000	1000	1000
228	Խառատային աշխատանքներ	1000	1000	1000
229	Փականագործի աշխատանքներ	1000	1000	1000
230	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	500	500	500
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	5 տեղանոց մարդատար հետևի տանող Գազ 31/	Նիսան Իքս Թրայ, Նիսան Պատֆայնդեր	Հունդայի Էլանտրա, Տոյոտա Կամրի
	1. Շարժիչ			
1	Շարժիչի բլոկ	1000	1000	1000
2	Շարժիչի գլխիկ	1000	1000	1000
3	Բարձիկ	3000	40000	40000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	1200	10000	10000
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	1000	2000	2000
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	24000	35000	35000
7	Շարժիչի փական դուրս մղող	2400	5000	5000
8	Շարժիչի փական ներս մղող	2400	5000	5000
9	Շարժիչի փականի խցուկ	1200	1200	1200
10	Ծնկաձև լիսեռ	1000	1000	1000
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	1200	5000	5000
12	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	1200	8000	8000
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	4000	8000	8000
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	2000	5000	5000
15	Հենակային տափողակ	500	600	600
16	Մխոց	4800	15000	15000
17	Մխոցային օղակներ	8000	15000	15000
18	Ատամնանիվ	2400	6000	6000
19	Ատամնավոր փոկ	0	0	12000

20	Շոթա	3600	5000	5000
21	Հիդրոծան	3000	5000	5000
22	Հրիչ	1000	1000	1000
23	Հիդրոհրիչ	3500	5000	5000
24	Բաշմակ	1000	4800	4800
25	Հանգստարար	2000	4800	4800
26	Թափանիվ	100	100	100
27	Թափանիվի պասկ	6000	14000	14000
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	0	3600	3600
29	Շկիվ	3000	6000	6000
30	Շարժաթև	2000	8000	8000
31	Կարտերի միջադիր	500	1000	1000
32	Միջադիր	2400	2400	2400
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
33	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	3500	3500	3500
34	Յուղ շարժիչի կիսաանոթետիկ, 1 լիտր	4000	4000	4000
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	5600	6000	6000
36	Յուղի գտիչ	1800	6000	6000
37	Յուղի պոմպ	3500	1000	1000
38	Յուղի պոմպի շարժաթևեր	100	100	100
39	Յուղի ուղղիատոր	2000	100	100
40	Յուղի փողորակ	1200	6000	6000
41	Յուղի ծորակ	10	100	100
42	Վառոցքի մոմ	2000	5000	5000
43	Բենզոլաք	100	100	100
44	Խառնարակ	0	0	0
45	Խառնարակի վերանորոգման հավաքածու	0	0	0
46	Ինժեկտորի ֆորսունկա	13500	20000	20000
47	Վառելանյութի մոխիչ էլեկտրական	20000	35000	35000
48	Վառելանյութի մոխիչ մեխանիկական	0	0	0
49	Վառելանյութի գտիչ	4500	12000	12000
50	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	100	100	100
51	Վառելանյութի փողորակ	2400	3600	3600
52	Աքսելերատորի ճուպան	1000	1000	1000
53	Օդի գտիչ	3600	12000	12000
54	Ջերմաստիճանային տվիչ	2400	1200	1200
55	Յուղի տվիչ	1000	3600	3600
56	Բաշխիչ լիսեռի տվիչ	3600	6000	6000
57	Օդի ծախսի տվիչ	1000	35000	35000
58	Արագաչափի տվիչ	3600	3600	3600
59	Հովհարի տվիչ	2400	3600	3600
60	Ջրի տվիչ	500	1000	1000
61	Բենզոլաքի տվիչ	2400	3600	3600
62	Մարման ընթացքի կարգավորիչ	10	10	10
63	Մարման ընթացքի տվիչ	10	10	10
64	Ղեկավարման համակարգիչ	1000	1000	1000
65	Պարապ ընթացքի տվիչ	1000	1000	1000
66	Դրոսելային փականի տվիչ	3000	5000	5000
67	Թթվածնի տվիչ	1000	950	960
	3. Սառեցման և արտածման համակարգ			
68	Հովհարի փոկ	100	1000	1000
69	Հովհար	18000	18000	18000
70	Ռադիատոր	28000	60000	60000
71	Ընդարձակող բաք	3600	12000	12000
72	Ռադիատորի փողորակ	2400	6000	6000
73	Թերմոստատ	3000	8400	8400

74	Ջրի պոմպ	15000	25000	25000
75	Ջրի պոմպի առանցքակալ	100	100	100
76	Ջրի պոմպի թևակ	100	100	100
77	Սառեցման հեղուկ 1 լիտր	4000	4000	4000
78	Ջրի պոմպի սոնանիվ	100	100	100
79	Հոլովակ	3000	6000	6000
80	Փոկ	3500	15000	15000
81	Փոկ կոնդիցիոների	100	100	100
82	Ծորակ	2000	2000	2000
83	Խլարարի ներդիր	500	2000	2000
84	Խլարարի կախոց	500	2000	2000
85	Կրոնշտեյն	500	500	500
86	Անուր (Խամուտ)	500	1000	1000
87	Խլարար	16000	50000	50000
88	Ռեզոնատոր	100	100	100
89	Վառարանի ռադիատոր	5000	24000	24000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ				
90	Կցորդման բանվորական գլան	5000	15000	0
91	Կցորդման գլխավոր գլան	7000	24000	0
92	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	500	500	0
93	Կցորդման տանող սկավառակ	28000	60000	0
94	Կցորդման տարվող սկավառակ	12000	50000	0
95	Կցորդման առանցքակալ	4800	30000	0
96	Կցորդման փողրակ	2400	12000	0
97	Փոխանցման տուփ	1000	1000	0
98	ՓՏ-ի առջևի խցուկ	1000	6000	0
99	ՓՏ-ի հետևի խցուկ	600	6000	0
100	ՓՏ-ի առանցքակալ	4800	12000	0
101	ՓՏ-ի առաջնային լիսեռ	1000	1000	0
102	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	100	100	0
103	ՓՏ-ի եղանիկ	3000	6000	0
104	ՓՏ-ի ատամնանիվ	4800	24000	0
105	Համաժամիչ	2400	8000	0
106	Մուֆտ	3000	8000	0
107	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	1200	20000	0
108	ԱՓՏ-ի զտիչ	0	18000	18000
109	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	0	1000	1000
110	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	0	1000	1000
111	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	3000	3600	3600
112	ԱՓՏ յուղ, 1 լիտր	0	6000	6000
113	ՓՏ-ի առաջնային լիսեռ	10	10	10
114	Հերմետիկ	3000	3600	3600
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ				
115	Բաշխիչ տուփ	0	1000	0
116	Բաշխիչ տուփի խցուկ	0	3600	0
117	Բաշխիչ տուփի առանցքակալ	0	5000	0
118	Բաշխիչ տուփի ատամնանիվ	0	5000	0
119	Բաշխիչ տուփի լիսեռ	0	1000	0
120	Կարդանային լիսեռ	1000	60000	0
121	Էլաստիկ մուֆտ	0	6000	0
122	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	4800	10000	0
123	Կարդանային լիսեռի խաչուկ	6000	15000	0
6. Առջևի և հետևի կամրջակներ				
124	Հետևի կամ առջևի կամրջակ	1000	1000	0
125	Ռեդուկտոր	1000	1000	0
126	Գլխավոր փոխանցման ատամնանիվների	1000	60000	0

	կոմպլեկտ			
127	Դիֆֆերենցիալ	1000	20000	0
128	Դիֆֆերենցիալի սատելլիտ	3600	10000	0
129	Տանող ատամնանիվի խցուկ	1000	2400	0
130	Տանող ատամնանիվի առանցքակալ	3600	5000	0
131	Դիֆֆերենցիալի առանցքակալ	2400	5000	0
132	Կիսատնի	35000	60000	0
133	Կիսատնու առանցքակալ	4000	10000	0
134	Կիսատնու միջադիր	10	10	0
135	Կիսատնու խցուկ	1000	2000	0
136	Կարգավորիչ տափողակ	100	100	0
	7. Կախոց			
137	Տրավերս	1000	1000	1000
138	Կրոնշտեյն	500	1000	1000
139	Ձախ կամ աջ հողակապ	0	60000	60000
140	Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց	0	4000	4000
141	Անվակունդ	16000	30000	30000
142	Անվակունդի խցուկ	10	1000	1000
143	Անվակունդի ներքին առանցքակալ	3600	15000	15000
144	Անվակունդի արտաքին առանցքակալ	3000	10000	10000
145	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	0	1000	1000
146	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	0	1000	1000
147	Ձախ կամ աջ հողակապի խցուկ	100	2400	2400
148	Հարվածամեղմիչի թասակ	10	7000	7000
149	Ջսպանակ	4000	6000	6000
150	Առջևի հարվածամեղմիչ	14000	70000	70000
151	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	100	6000	6000
152	Հարվածամեղմիչի վռան	600	1800	1800
153	Ներքևի լծակ	1000	36000	36000
154	Ներքևի լծակի վռան	2500	9600	9600
155	Վերևի լծակ	1000	1000	1000
156	Վերևի լծակի վռան	2500	100	100
157	Գնդե հողակապ	4500	10000	10000
158	Առջևի կայունարար	100	1000	1000
159	Առջևի կայունարարի վռան	2400	6000	6000
160	Առջևի կայունարարի առջևի վռան	10	10	10
161	Հետևի զսպանակ	10	100	100
162	Հետևի ցնցամեղմիչ	13500	40000	40000
163	Հետևի մետաղաձող (շտանգա)	0	8000	8000
164	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	0	6000	6000
165	Հետևի անկյունագծային լծակ	0	1000	1000
166	Անկյունագծային լծակի վռան	0	4800	4800
167	Ջսպակ (ռեսսորս)	18000	0	0
168	Ջսպակի վռան	3000	0	0
169	Ջսպակի միջադիր	600	0	0
170	Ջսպակի բռնիչ	1000	0	0
171	Աջ կամ ձախ ձգան	6000	18000	18000
172	Ծայրակալ	2700	9600	9600
173	Ձգան մեջտեղի	8000	4000	4000
174	Անվախեծ	100	1000	1000
	8. Ղեկային մեխանիզմ			
175	Ղեկային կայուն	1000	1000	1000
176	Ղեկային կայունի առանցքակալ	4000	1000	1000
177	Ղեկային կայունի խաչուկ	4000	5000	5000
178	Հիդրոուժեղարար	1000	1000	1000
179	Հիդրոուժեղարարի փոկ	100	100	100

180	Հիդրոմեդարարի վերանորոգման կոմպլեկտ	5000	12000	12000
181	Հիդրոմեդարարի պոմպ	100	1000	1000
182	Հիդրոմեդարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	100	100	100
183	Ղեկային ձող	10	100	100
184	Ղեկային ձողի ծայրակալ	10	100	100
185	Հիդրոմեդարարի յուղ, 1 լիտր	3000	6000	6000
186	Ճոճանակ	5000	100	100
187	Ճոճանակի վրան	1000	100	100
	7. Արգելակային համակարգ			
188	Գլխ. գլան	8000	35000	35000
189	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	1000	2000	2000
190	Վակուումային ուժեղարար	20000	40000	40000
191	Բանվ. գլան	3000	6000	6000
192	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	1000	100	100
193	Արգելակային փողրակ	2400	9600	9600
194	Սուպպորտի ուղղորդիչ	10	100	100
195	Սուպպորտի մանժետ	100	100	100
196	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	7000	42000	42000
197	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	0	36000	36000
198	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	10800	10	10
199	Առջևի արգելակային սկավառակ	8000	25000	25000
200	Հետևի արգելակային սկավառակ	0	25000	25000
201	Ձեռքի արգելակի ճոպան	5000	10000	10000
202	ABS-ի տվիչ	0	2000	2000
203	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	500	500	500
204	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2400	2400	2400
205	Ձեռքի արգելակի ճոպան	0	0	0
	9. Էլեկտրասարքավորում			
206	Գեներատոր	30000	50000	50000
207	Գեներատորի դիոդային կամրջակ	7000	8000	8000
208	Գեներատորի ռեկտ	5000	8000	8000
209	Գեներատորի առանցքակալ	2000	6000	6000
210	Ստարտեր	28000	48000	48000
211	Ստարտերի ռեկտ	1600	10000	10000
212	Ստարտերի ածուխ	4000	8000	8000
213	Բենդեքս	6000	8000	8000
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	7000	10000	10000
215	Առջևի լապտեր	1000	1000	1000
216	Առջևի թարթիչ	2400	1000	1000
217	Հետևի լապտեր	8000	1000	1000
218	Հետևի թարթիչ	3600	1000	1000
219	Արգելակային լապտեր	3600	6000	6000
220	Լամպ	2400	4800	4800
221	Էլեկտրական անջատիչ	2400	4800	4800
222	Էլեկտրական տվիչ	25000	25000	25000
223	Էլեկտրական չափիչ սարք	1000	4800	4800
224	Բռնկման կողպեք	7000	12000	12000
225	Էլեկտրալարերի գլխավոր խուրջ	100	100	100
226	Էլեկտրալարերի երկրորդային խուրջ	15000	30000	30000
227	Վառոցքային լարերի խուրջ	6000	6000	6000
228	Վառոցքի մոմի ծայրակալ	1000	3600	3600
229	Վազբաչափ	100	5000	5000
230	Վազբաչափի ճոպան	10	1000	1000

231	Արագաչափ	100	2000	2000
232	Ազդանշան	3000	3600	3600
233	Ապակեվազիչ	2400	3600	3600
234	Ապակեվազիչի շարժիչ	9870	17500	17240
235	Դռների կենտրոնական փական	5000	4650	5930
236	Ազդանշային համակարգ	1000	10000	10000
237	Մագնիտոլա	1000	10000	10000
238	Էլեկտրաամբարձիչ	8000	15000	15000
239	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	8000	15000	15000
240	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	3600	3600	3600
Ծառայության մատուցման ժամկետը				
Սկիզբը			ավարտը	
Պայմանագրի կնքման պահից			20.12.2017թ.	

- 1 - պարտադիր պայման է օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի չօգտագործված լինելը
- 2 - Տեխնիկական սպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի տարածքում
- 3- պարտադիր պայման է հանդիսանում մինչև ավտոմեքենայի վերանորոգումը տրամադրել տեղեկանք ավտոմեքենայի անսարքության և վերանորոգման համար պահանջվող գումարի մասին

Պատվիրատու


Կատարող

«Ընդերգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
 ք. Երևան, Հանրապ. Հրապարակ
 Կառավարական տուն 3
 Հ/Հ 900011009074, 900011009082
 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործ. վարչություն
 ՀՎՀՀ 02508219

«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ
 ք. Երևան, Ն. Տիգրանյան 1, փակուղի 1
 Հ/Հ 217002121630001
 ՀՎՀՀ 00131374

Ստորագրողի տեղում

«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ



Կ. Ղահրամանյան



Ա. Հովսեփյան

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Տ/հ	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում											Ընդամենը Տարի	
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր		դեկտեմբեր
Նախարարի աշխատակազմ														
3	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ - Նիսան Իքս Թրայլ, Նիսան Պատֆայնդեր			51000	178500	178500	178500	331500	331500	331500	510000	510000	510000	510000
4	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ - Հունդայի Էլանտրա, Տոյոտա Կամրի			48175	168613	168613	168613	313100	313100	313100	481750	481750	481750	481750
ԸՆԴԱՄԵՆԸ													991750	
Նախարարության աշխատակազմ														
1	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ 5 տեղանոց մարդատար հետևի տանող /Գազ 31/			53690	188000	188000	1879	349000	349000	349000	536900	536900	536900	536900

3	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ - Նիսան Իքս Թրայլ, Նիսան Պատֆայնդեր			10000	35000	35000	35000	65000	65000	65000	100000	100000	100000	100000
4	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ - Հունդայի Էլանտորա, Տոյոտա Կամրի			71250	71250	71250	71250	71250	71250	71250	71250	71250	71250	71250
														708150

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:


Պատվիրատու

Կատարող


«Հներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն»
 ք. Երևան, Հանրապ. Հրապարակ
 Կառավարական տուն 3
 Հ/Հ 900011009074, 900011009082
 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործ. վարչություն
 ՀՎՀՀ 02508219

«Կարկունավտո սերվիս» ՍՊԸ
 ք. Երևան, Ն. Տիգրանյան 1, փակուղի 1
 Հ/Հ 217002121630001
 ՀՎՀՀ 00131374
 «ԷԻ-ԵՍ-ԲԻ-ՍԻ բանկ Հայաստան» ՓԲԸ

/Աշխատակազմի ղեկավար



Կ. Ղահրամանյան



Ա. Հովսեփյան

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
hh _____
հվհհ _____

գտնվելու վայրը _____
hh _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՄԱՆ

« » « » 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «Պետության կարիքերի համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման» պետական գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «մարտ» 2017 թ.

Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի տնտեսական բաժնի պետ՝ Վ. Բարսեղյանի և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Table with 8 columns: N, անվանումը, տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը, քանակական ցուցանիշը (ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի, փաստացի), կատարման ժամկետը (ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի, փաստացի), Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/, Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և

(Պատվիրատուի անունը)
 -----ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ. ----- -ին կնքված N -----

(Կատարողի անունը)
 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. ----- -- -ին հանձնման-
 ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

 ազգանուն, անուն

 ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

 ազգանուն, անուն

 ստորագրություն